ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երևան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ. փոստ՝ meo@ypc.am

Դիտորդ մարմնի կազմը՝

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Հանրային հեռուստաընկերության «Տարբեր կարծիքներ Աստղիկ Սարգսյանի հետ» հաղորդաշարի 2022թ. հոկտեմբերի 24-ին հեռարձակված «Ողբերգության պատճառները. ինչպես խուսափել կրկնությունից» խորագրով թողարկման վերաբերյալ:

Դիմող՝ «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ի մոնիթորինգի և գնահատման մասնագետ Հռիփսիմե Կիզոգյան:

Ա. ՓԱՍՏԵՐ

- 2022թ. նոյեմբերի 14-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը Հռիփսիմե Կիզոգյանից ստացել է բողոք Հանրային հեռուստաընկերության «Տարբեր կարծիքներ Աստղիկ Սարգսյանի հետ» հաղորդաշարի 2022թ. հոկտեմբերի 24-ին հեռարձակված «Ողբերգության պատճառները. ինչպես խուսափել կրկնությունից» խորագրով թողարկման վերաբերյալ:
- Հաղորդման հյուրերն են եղել հոգեբան Իրինա Ծատուրյանը և Ազգային արժեքների պաշտպանության նախաձեռնության անդամ, փաստաբան, ՀՀ փաստաբանների պալատի նախկին նախագահ Արա Զոհրաբյանը: Հաղորդման առիթը եղել է 2022թ. հոկտեմբերի 20-ին 16 և 21-ամյա երիտասարդների ենթադրյալ ինքնասպանության դեպքը, որը, ելնելով նրանց կողմից Ինստագրամ սոցիալական ցանցում արված վերջին գրառումից, կապվել է երիտասարդների սեռական կողմնորոշման հետ:
- Բողոքում մասնավորապես ասված է. «…Հարցազրույցն ամբողջությամբ պարունակում է հակագիտական, հրավիրյալների մասնագիտացման սկզբունքներից չբխող պնդումներ, Արա Զոհրաբյանի կողմից հնչել է նաև արտահայտություն, որը կարող է որակվել որպես արժանապատվությունը նվաստացնող արտահայտություն, ինչն էլ ըստ էության հանդիսանում է ատելության խոսք: Նա,

մասնավորապես, տրանսգենդեր անձանց անվանել է շեղված»:

- 2022թ. նոյեմբերի 14-ին Դիտորդ մարմնի համակարգողը նամակով դիմել է բողոքը ներկայացրած Հռիփսիմե Կիզոգյանին՝ ճշտելու համար վերջինիս՝ պատշաճ դիմող լինելու հանգամանքը, քանի որ, ըստ ԴՄ աշխատակարգի 4.6. կետի՝ *«ԴՄ-ն կարող է ընդունել երրորդ անձանց դիմում-բողոքը, եթե այն ներկայացնում է տվյալ ոլորտում մասնագիտացած ՀԿ-ն, և եթե բողոքը վերաբերում է տվյալ ՀԿ-ի շահառուին առնչվող հրապարակումներին»:*

- Հ.Կիզոգյանն իր պատասխան նամակում (14.11.2022) գրել է, որ բողոքը ներկայացրել է «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ի անունից, որտեղ զբաղեցնում է մոնիթորինգի և գնահատման մասնագետի պաշտոնը:

- 2022թ. նոյեմբերի 29-ին Դիտորդ մարմինը Հռիփսիմե Կիզոգյանից ստացել է նամակ, որին, ի հավելումն իր ներկայացրած բողոքի, կցված են եղել «Փինք» իրավապաշտպան կազմակերպության նախագահ Լիլիթ Ավետիսյանի նամակը՝ ուղղված Հանրային հեռուստաընկերության գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանին և վերջինիս պատասխանը:

- Հանրային հեռուստաընկերության տնօրենին ուղղված նամակում «Փինք»ՀԿ-ի նախագահը մասնավորապես նշել է. «Հաղորդման ընթացքում հնչել են հակագիտական պնդումներ և վերլուծություններ, որոնք մտահոգիչ են այն առումով, որ կարող են սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վերաբերյալ իրազեկվածության չափազանց ցածր մակարդակ ունեցող հասարակության համար ապակողմնորոշիչ լինել, սնել ԼԳԲՏ անձանց նկատմամբ բացասական վերաբերմունքը: Արդյունքում՝ անկախ նրանից, թե որն է եղել հաղորդման նպատակը, այն կարող է է՛լ ավելի ճնշող և հուսահատեցնող ազդեցություն ունենալ ԼԳԲՏ անձանց վրա: … Միանալով մարդու իրավունքների ճանաչման մի շարք փաստաթղթերի՝ Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է պարտավորություն՝ հարգել իր տարածքում գտնվող յուրաքանչյուր անհատի իրավունքները և ազատությունները…: Պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի ոչ միայն օրենսդրական մակարդակում, այլ նաև հասարակությանը կրթելու, իրազեկվածությունը բարձրացնելու, հանդուրժողականություն սերմանելու առումով: Այս գործառույթը պետք է ապահովվի, ի թիվս այլոց, լրատվության միջոցով, որտեղ պետության առաջնային ռեսուրսը Հանրային հեռուստատեսությունն է: … Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք հեռացնել նշյալ հաղորդման տեսագրությունը կամ հարթակ տրամադրել սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վերաբերյալ գիտականորեն հիմնավորված և մարդու իրավունքների սկզբունքներից բխող տեղեկատվության

համար…»։

- «Փինք» ՀԿ գործադիր տնօրենին ուղղված պատասխան նամակում Հանրային հեռուստաընկերության տնօրեն Հ. Մովսիսյանը մասնավորապես նշել է. « Հայաստանի հանրային հեռուստաընկերության քաղաքականության համաձայն՝ հաղորդումների տեսագրությունները հեռացվում են բացառապես օրենսդրորեն նախատեսված սկզբունքների խախտման և/կամ դրանցում տեխնիկական խոտանի առկայության դեպում։ «Տարբեր կարծիքներ Աստղիկ Սարգսյանի հետ» հաղորդման ս.թ. հոկտեմբերի 24-ի եթերում հաղորդման հյուրերը հայտնել են իրենց սուբյեկտիվ կարծիքը…։ Նրանց կողմից արտահայտված կարծիքը ատելության խոսք չի պարունակում։ … Հաշվի առնելով եթերացանցի ծանրաբեռնվածությունը և թեմաների ընտրությունն ըստ արդիականության՝ օրակարգում Ձեր կողմից բարձրացված թեմայի առկայության դեպքում առաջիկայում հարթակ կտրամադրվի Ձեզ կամ Ձեր կազմակերպության ներկայացուցչին»։

- 2022թ. դեկտեմբերի 14-ին տեղի է ունեցել ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի առցանց նիստ, որտեղ քննվել է «Փինք» իրավապաշտպան ՀԿ անունից ստացված բողոքը։

Բ. ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

1. Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր
1.4. Հստակ սահմանազատել փաստերի և տեղեկությունների շարադրանքը՝ կարծիքներից, վերլուծություններից և մեկնաբանություններից։
1.5. Վերլուծություններ և մեկնաբանություններ կատարելիս հիմնվել ստույգ փաստերի և հավաստի տեղեկությունների վրա։

1.6. Զգտել, որ հաղորդագրությունները, լուսանկարային, տեսագրված ու ձայնագրված նյութերը համապատասխանեն իրականությանը, վերնագրերը բխեն նյութի բովանդակությունից, չչարաշահվեն հանրային դեմքերի և սովորական մարդկանց անձնական տվյալների համընկնումները, մեջբերումները չօգտագործվեն համատեքստից դուրս։

5.1. Խուսափել մարդկանց հանդեպ նախապաշարված վերաբերմունքից՝ նրանց ցեղային, սեռային, տարիքային, կրոնական, ազգային, աշխարհագրական պատկանելության, սեռական կողմնորոշման, ֆիզիկական արատների, արտաքինի կամ սոցիալական կարգավիճակի պատճառով։

5.2. Որևէ ձևով չքարոզել ազգային, կրոնական թշնամանք և անհանդուրժողականություն, քաղաքական, սոցիալական, սեռական և լեզվական հայտանիշներով խտրականություն, բացառել ատելության խոսքը։

6.1. Աջակցել կարծիքների ազատ փոխանակմանը, անկախ նրանից, որ այդ կարծիքները կարող են տարբերվել խմբագրական տեսակետներից:

6.2. Պատրաստակամ լինել հանդիպելու այն անձանց կամ կազմակերպությունների ներկայացուցիչներին, որոնք իրենց վիրավորված կամ զրպարտված են համարում կոնկրետ հրապարակմամբ, և պատասխանի հնարավորություն ընձեռելու բոլոր նրանց, ում հասցեին քննադատություն կամ մեղադրանքներ են եղել հրապարակումներում:

6.3. Ընդունել սեփական սխալները և պատրաստակամ լինել՝ ուղղելու դրանք:

6.4. Քաջալերել հանրությանը՝ արտահայտելու ԶԼՄ-ների նկատմամբ իրենց քննադատական վերաբերմունքը, պատրաստ լինել լրագրողական էթիկայի հարցերի շուրջ հասարակության հետ երկխոսության:

Գ. ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը՝

Նկատի առնելով, որ

- թեև ի սկզբանե Հռիփսիմե Կիզոզյանի բողոքն ուներ մասնավոր դիմումի տեսք, սակայն հետագա հարցման միջոցով պարզվել է, որ վերջինս հանդես է եկել «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ի անունից և արտահայտում է այդ կազմակերպության վերաբերմունքը խնդրո առարկա հեռուստահաղորդման վերաբերյալ:

Ըստ այդմ՝

- Դիտորդ մարմինն իր քննարկումներում հիմնվել է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների Էթիկական սկզբունքների կանոնագրի դրույթների և Դիտորդ մարմնի՝ 2017թ. մայիսի 17-ին ընդունված՝ Զանգվածային լրատվության միջոցներում խտրականության դրսևորումները բացառելու և հանդուրժողականություն ապահովելու վերաբերյալ ուղեցույցի վրա, որում մասնավորապես նշվում է. «Հասարակության շրջանում գենդերային խնդիրների ոչ միանշանակ ընկալումն իր ազդեցությունն է ունենում լրատվամիջոցների հրապարակումների վրա»: Ուղեցույցը լրատվամիջոցներին հորդորում է ուշադրություն դարձնել «այլ դավանանքի, ազգի ներկայացուցիչ, հայացքների տեր, սեռական կողմնորոշում, սոցիալական կարգավիճակ ունեցող մարդկանց բնորոշելու համար օգտագործված բառապաշարին», ինչպես նաև խորհրդատվության համար դիմել «համապատասխան խնդիրներով զբաղվող կազմակերպությունների» ներկայացուցիչներին:

Արձանագրում է, որ

- մասնագիտական էթիկայի տեսակետից բողոքի հասցեատեր

դարձած հաղորդման որոշակի թերացումները պայմանավորված են հենց Ուղեցույցում նշված խորհրդատվությանը չդիմելով։

Ելնելով վերոնշվածից՝ Դիտորդ մարմինը եզրակացնում է, որ

- ֆորմալ առումով՝ ընտրված թեմայով բանավեճին հրավիրված հյուրերը՝ սեռական տարբեր կողմնորոշումներ ունեցող անձանց հետ աշխատող հոգեբանը և իրեն որպես ավանդական արժեքների պաշտպան դիրքավորող փաստաբանը համապատասխանում էին հաղորդման մտահղացմանը, և այդ առումով Հանրային հեռուստաընկերությունը բավարարել է Կանոնագրի 6.1. կետը։
- Սակայն հաղորդման ընթացքում հյուրերն արտահայտում էին ոչ միանշանակ, սուբյեկտիվ տեսակետներ և հակված չէին դրանց վերաբերյալ ընդդիմախոսել միմյանց, ինչը չէր նպաստում լսարանի կողմից խնդրի բազմակողմանի և խորը ընկալմանը։ Որպես հետևանք՝ ոչ բավարար չափով էին հաշվի առնվել Կանոնագրի 1.4. և 1.5. կետերը։

- Հաղորդման հյուրերի միակողմանի կարծիքներն էականորեն կփոխհատուցվեին, եթե հաղորդավարը միջամտեր առավել վիճահարույց պնդումներին։ Դա ենթադրում էր նրբանկատություն պահանջող նյութին խմբագրության հիմնավոր պատրաստվածություն։

- Թեև որոշ դեպքերում հաղորդավարին հաջողվում էր զրույցն ուղղել մասնագիտական էթիկայի առումով պատշաճ հուն, սակայն առնվազն երկու դեպքում նման անհրաժեշտ միջամտություն կամ ճշտում չհետևեց՝ մասնավորապես, երբ հյուրերից մեկը նույնասեռականությունը բնութագրեց որպես «շեղում», իսկ մյուսի ասածից՝ սեռական կողմնորոշումը կարող էր հասկացվել որպես անձի ընտրություն։ Նշված դրվագները հիմք են տալիս արձանագրել Կանոնագրի 5.1. և 5.2 կետերի խախտում։

Դիտորդ մարմինը գիտակցում է, որ

- բազմակարծության և խոսքի ազատության պայմաններում բարդ թեմաներին անդրադառնալիս հնարավոր չէ խուսափել սխալներից։ Սակայն որակյալ և պատասխանատու լրատվամիջոցներից ակնկալվում է սխալների շտկման ուղղությամբ բաց և արդյունավետ աշխատանք։
- ԴՄ-ն հիմնավորված է համարում Հանրային հեռուստաընկերության տնօրինության մոտեցումը՝ եթերից չհեռացնել որևէ հաղորդում, եթե դրանում առկա չէ օրենքի խախտում կամ տեխնիկական խոտան։
- Միևնույն ժամանակ, Կանոնագրի 6.2, 6.3 և 6.4. կետերը ենթադրում են հեռուստաընկերության կողմից ժամկետների և ձևաչափի առումով ավելի որոշակի պատասխան «Փինք» ՀԿ-ի համագործակցության առաջարկին։

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը հիշեցնում է, որ Կանոնագիրը ստորագրած լրատվամիջոցների ներկայացուցիչները, ընդունելով իրենց

իսկ կողմից ընտրված Դիտորդ մարմնի իրավասությունը՝ քննելու իրենց գործողությունների ու հրապարակումների համապատասխանությունը Կանոնագրի դրույթներին, պատրաստակամություն են հայտնել ԴՄ-ի որոշումը հրապարակելու իրենց լրատվամիջոցներում:

Ընդունվել է 2022թ. դեկտեմբերի 29-ին,
ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետևյալ կազմով՝

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ, «Մեդիամաքս» լրատվական գործակալության գլխավոր խմբագիր
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ, Վանաձորի «Լոռի» հեռուստաընկերության գործադիր տնօրեն
Արա ՂԱԶԱՐՅԱՆ, իրավաբան
Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Գյումրիի «ԳԱԼԱ» հեռուստաընկերության գործադիր տնօրեն
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, «Արմենիա» հեռուստաընկերության օմբուդսման
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի նախագահ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ, Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության խմբագիր
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Media.am-ի պրոդյուսեր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 69-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: